Konrad
Adenauer
Stiftung

# ՈՒՂՂՈՐԴԻՉ ԳԾԵՐ ԲԱՐԵԿԵՑՈՒԹՅԱՆ, ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԱՐԴԱՐՈՒԹՅԱՆ ԵՎ ԿԱՅՈՒՆ ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ

# ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

**3** | ՆԱԽԱԲԱՆ

**3** | ՈՒՂՂՈՐԴԻՉ ԳԾԵՐ

1. Իրավական պետական կանոնակարգ........3
2. Սեփականության կարգ և զբաղվածություն........3
3. Մրցակցությունը որպես հիմք........4
4. Պատասխանատվության սկզբունքի կիրառում........4
5. Տնտեսական շրջանակային պայմանների կայունություն........4
6. Հանրային իրերի տրամադրում պետության կողմից........4
7. Համերաշխություն և սոցիալական ապահովություն........4
8. Դրդիչ համատեղելիություն........4
9. Կայունություն........4
10. Բաց շուկաների քաղաքականություն........4

**5** | ԳԼՈԲԱԼ ՍՈՑԻԱԼ-ՇՈՒԿԱՅԱԿԱՆ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԿՈՂՄՆՈՐՈՇՎԱԾՈՒԹՅԱՄԲ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԿԱՐԳԻ ՀԱՋՈՂՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՊԱՅՄԱՆՆԵՐ

Համաշխարհային ֆինանսատնտեսական ճգնաժամի հաղթահարումը պահանջում է միջազգային կանոններ: Սոցիալ-շուկայական տնտեսության համակարգային մոդելն առաջարկում է մի այդպիսի կողմնորոշիչ շրջանակ, որն ազգայնորեն արդարացրել է իրեն: Եվրոպական Միության պետությունները Լիսաբոնի պայմանագրով պարտավորվում են ազդել „մրցունակ սոցիալ-շուկայական տնտեսությանը“: Եվրոպական Միության կառույցները, հատկապես Եվրախորհրդարանը, նախորդ ամիսների ընթացում ապացուցեցին, որ իրենք հաշվի են առնում այդ հանձնարարականը: Այժմ պետք է հոգալ նաև այդ սկզբունքների միջազգային վավերականության մասին: Եվրոպական Միությունում քաղաքականության և գիտության ղեկավար ներկայացուցիչները կոչել են հետևյալ ուղղորդիչ գծերից:.

## ԱՌԱՋԱԲԱՆ

Անող տնտեսաքաղաքական ներհյուսումն աշխարհի բազմաթիվ երկրներում հանգեցրել է ավելի շատ աճի և մրցակցության, բարելավել է կրթական հնարավորությունները, ուժեղացրել ինֆրակառուցվածքը և կրճատել աղքատությունը: Այնուհանդերձ սպառնալիքի են ենթարկված խաղաղությունը, ազատությունն ու արդարությունը: Համընդհանուր բարեկեցության անհավասար բաշխումը համապատասխանատու է աճող քաղաքական և սոցիալական լարվածությունների համար: Ներկայիս ֆինանսատնտեսական ճգնաժամը կարող է հաղթահարվել միայն միջազգային կանոններով: Դա պահանջում է կայուն տնտեսվարման համատեղ գիտակցում: Մեզ հարկավոր է միջազգային համաձայնություն, որը համատեղ սկզբունքների և արժեքների հիման վրա հնարավոր կդարձնի բարեկեցությունը, սոցիալական արդարությունը և կայուն տնտեսվարումը: Ընդ որում համաշխարհայնացման դրական ազդեցությունները նաև ճգնաժամային ժամանակաշրջանում իրավունք չունեն վտանգվել ազգային կամ տարածաշրջանային հովանավորչությունից: Հանրային բարօրության կողմնորոշվածությունը, ժողովրդավարական լեգիտիմությունը և մարդու արժանապատվության անձեռնմխելիությունը այն հիմքերն են, որոնց վրա կառուցվում է մի այսպիսի համաձայնություն՝ հաշվի առնելով մշակութային և հասարակական առանձնահատկությունները:

## ՈՒՂՂՈՐԴԻՉ ԳԾԵՐ

Ուղղորդիչ գծերն են համերաշխությունն ու սուբսիդիարությունը: Համերաշխությունն հոգում է այն մասին, որ շուկայական տնտեսությունը գնալով իր ինքնությունն հաստատի հանրային բարօրությանն ուղղված իր կողմնորոշվածությամբ: Սուբսիդիարությունը սեփական պատասխանատվության և սեփական նախաձեռնությունների համար դաշտ է ստեղծում և երաշխավորում:

### 1. Իրավական պետական կանոնակարգ

Գործունակ, վստահելի և ժողովրդավարապես լեգիտիմացված իրավական համակարգը հիմք է հանդիսանում արդյունավետ և կայուն տնտեսական գործունեության համար: Այն նախապայման է ստեղծում գործունակ տնտեսության, արդյունավետ պետական կառավարման, ինչպես նաև կառավարության լավ առաջնորդության սկզբունքները նկատի առնելու համար: Կանոնակարգող բաղադրիչները և հետևողական հսկողությունը վերահսկում են կանոնների պահպանումը և պատժում են հակակառավարական վարմունքը: Դա ինքնանպատակ չէ: Կանոնակարգումը տեղին է և ճիշտ՝ խթանները մրցակցային տնտեսության մեջ այնպես կազմավորելու, որ մրցակցությունում ապակենտրոն վարմունքը ուղղորդի հասարակական-քաղաքական օգտակար արդյունքների:

### 2. Սեփականության կարգը և զբաղվածությունը

Արդյունավետ և կայունությանն ուղղված տնտեսական կառուցվածքը պետք է հիմնվի անհատական սեփականության կարգի վրա, որը անհատ ձեռնարկատերերի ձեռքն է հանձնում իրերի տնօրինման իրավունքը: Անհատական սեփականությունը աշխատանքի միջոցով վճռորոշ խթան է ստեղծում եկամտի ձեռքբերման համար և հիմք է հանդիսանում նորարարական ձեռնարկատիրության համար: Միայն մի՝ անձնական սեփականության վրա հիմնված տնտեսական կարգ է ապահովում կայուն զբաղվածություն: Այս հիմքի վրա էլ կարող են առաջանալ սեփական պատասխանատվություն և սեփական նախաձեռնություն, առանց որոնց անպատկերելի է արդյունավետ շփում՝ սեփական ներուժով, կրթությամբ, նորարարությամբ, աճով և բարեկեցությամբ: Անձնական սեփականությունը բնորոշում է մրցակցության կարգ, որում բազմաթիվ փոքր ու միջին ձեռնարկատերեր իրենց անձնական սեփականությամբ պատասխանատու են իրենց զբաղվածության համար: Սեփականությունը ներառում է սոցիալական պարտավորություն: Նրա կիրառումը պետք է միաժամանակ ծառայի համընդհանուր բարօրությանը: Սա ապահովում է մեծաքանակ, կայուն ձեռնարկատիրական գործունեություն և պաշտպանում է միակողմանի և կարճաժամկետ եկամտաբերության ձգտումից:

## 3. Մրցակցությունը որպես հիմք

Ազատ գնագոյացման հիմքի վրա համընդհանուր մրցակցության կարգը օպտիմալացնում է սեղմ միջոցների բաշխումը: Գործունակ մրցակցությունը կայուն տնտեսվարման շարժիչ ուժն է: Այն նպաստում է արդյունավետությանն ու առաջընթացին, ուժեղացնում է պատասխանատվությամբ լի գործունեությունը և խոչընդոտում միակողմանի շուկայական իշխանության առաջացումը: Մրցակցության կարգը պահանջում է ազգայնորեն, ինչպես նաև միջազգայնորեն բաց շուկաներ և շուկայական իշխանություն ու կենտրոնացման վերահսկողություն պետության և պետությունների ընդհանրության միջոցով: Մրցակցությունն հիմնվում է կատարման սկզբունքի և հնարավորությունների հավասարության վրա:

## 4. Պատասխանատվության սկզբունքի կիրառում

Մրցակցության ազատությունը պայմանավորում է պատասխանատվության սկզբունքի կիրառում՝ ձեռք բերված արդյունքների մրցակցությունը կապել յուրաքանչյուր առևտրականի պատասխանատվության հետ: Շահույթի հեռանկարները խթանում են մրցակցությունը: Կորուստների ժամանակ անձնական երաշխավորությունը միաժամանակ սահմանափակում է անպատասխանատու և չափազանց ռիսկային պատասխանատվությամբ գործողությունը:

## 5. Տնտեսական կարգի պայմանների կայունություն

Շուկայատնտեսական կարգը կարիք ունի երկարաժամկետ հարթ տնտեսական քաղաքականության և հնարավորինս մեծ մակրոտնտեսական կայունության: Դա գործում է հատկապես ազգային և միջազգային ֆինանսական շուկաների համար: Ներդրումներն ու երկարաժամկետ սպառողական վճիռները կայուն շրջանակային կարգի վստահություն են ենթադրում: Դրան է պատկանում նաև հովանավորչական միջոցառումների, ինչպես նաև փողի քաղաքականության մերժումը, որը կենտրոնանում է կարճաժամկետ ազգային տնտեսական և աճի նպատակների վրա:

## 6. Հանրային իրերի տրամադրում պետության կողմից

Շուկայատնտեսական համակարգում պետությունը պետք է ապահովի հանրային իրերի տրամադրում, եթե շուկան այդ իրերը չի տրամադրում կամ տրամադրում է դրա ոչ բավարար քանակություն: Հզոր ենթակառուցվածքը, հիմնական կրթական հնարավորությունները և համապարփակ առողջապահական ապահովման մուտքը այն ոլորտներն են, որոնք պետք է ձևավորի պետությունը: Սոցիալական անհրաժեշտության դեպքում պետության հանդեպ պահանջն առանձնահատուկ չափի է: Պետական միջամտությունները պետք է, այնուամենայնիվ, սահմանափակ լինեին:

## 7. Համերաշխություն և սոցիալական ապահովություն

Տնտեսական աճը նպաստավոր է դարձնում աղքատության դեմ պայքարը: Շուկայական տնտեսությունը չի կարող խոչընդոտել եկամուտների տարբերության և բնակչության տարբեր շերտերի թերությունների առաջացումը: Այդ պատճառով շուկայական տնտեսությունում պահանջվում են մեծ ազդեցություն ունեցող, շուկային համապատասխան սոցիալական ապահովության համակարգեր, տարածաշրջանային համաձայնության մեխանիզմներ, ինչպես նաև ձեռքբերումների/հաջողության ձգտող հարկային համակարգ՝սոցիալական խաղաղություն ապահովելու և տնտեսական ու հասարակական զարգացմանը բնակչության լայն շերտերի համապատասխան մասնակցության հնարավորություն տալու համար:

## 8. Դրդիչ համատեղելիություն

Պետական խնդիրների ֆինանսավորման համար շուկայատնտեսական կարգում դրդիչ հարկային համակարգի պահանջ կա: Հարկերը չպետք է այնպես ուրվագծված լինեն, որ նվազեցնեն շահագրգռվածության դրդումները կամ մղեն բաշխող աղավաղումների:

## 9. Կայունություն

Յուրաքանչյուր տնտեսական համակարգ պետք է չափվի նաև իր երկարաժամկետ արդյունքներով: Բնապահպանական, սոցիալական և ֆինանսական տեսանկյունից կայունությունը հաջողության կարևորագույն չափանիշներից մեկն է, ինչպես նաև՝ սերունդների արդարության արտահայտություն: Պատասխանատվության վրա հիմնված իրավական կարգը ուժեղացնում է կայունությունը: Հատկապես կլիմայի պաշտպանության ակտիվ քաղաքականությունը ապագա սերունդների բնական կենսական հիմքերի ապահովման տնտեսական և բարոյական պարտականություն է:

## 10. Բաց շուկաների քաղաքականություն

Ազգային մենակատարները բալասան չեն ճգնաժամում, այլ ընդհակառակը. նրանք կարող են վատթարացնել տնտեսական ճգնաժամի համաշխարհային ազդեցությունները: Վճռորոշ է բաց շուկաների համակարգված քաղաքականությունը, ինչես նաև արդար խաղի կանոնների հանդեպ ուշադրությունը: Պետք է շարունակ ուժեղացվեն կարևոր միջազգային կառույցները՝պրոտեկցիոնիզմի և տնտեսական ազգայնամոլության դեմ:

## ՀԱՋՈՂՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՊԱՅՄԱՆՆԵՐ ԳԼՈԲԱԼ ՍՈՑԻԱԼ-ՇՈՒԿԱՅԱԿԱՆ ՏՆՏԵՍԱԿԱՆՈՐԵՆ ԿՈՂՄՆՈՐՈՇՎԱԾ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՀԱՄԱՐ

Բաց և գլոբալ տնտեսությունը միջազգային շրջանակների կարիք ունի: Այն սկզբունքներն ու կանոնները, որոնք ազգային, ինչպես նաև եվրոպական մակարդակով սոցիալ-շուկայական տնտեսությամբ կողմնորոշված տնտեսական - և արժեքային համակարգի շրջանակներում հաջողվել են, պետք է կիրառվեն նար միջազգային մակարդակով: Այս սկզբունքները միավորում են ազատությունն ու պատասխանատվությունը՝ ի շահ բոլորի: Դրանք պետք է հատկապես ֆինանսական շուկաների բնագավառում բարելավվեն և ուժեղացվեն համաշխարհային առևտրի համակարգում: Անհրաժեշտ է օրինականացման, գործունակության և միջազգային կառույցների խորացված համագործակցության, ինչպես նաև ինտեգրալ համագործակցության փորումների ստեղծման ընդլայնումը, որի համար հիմք են հանդիսանում հուսալի իրավական համակարգը և սուբսիդիար կողմնորոշվածությամբ ժողովրդավարական համակարգը: Ազգերի մեջ քաղաքական մրցակցությունն ու քաղաքական մասնակցությունը պահանջում են տնտեսական զարգացում և միջազգային հասարակական ու տնտեսական համակարգերի կայունություն: Անկախ ԶԼՄ-ների և միությունների միջոցով անհրաժեշտ տեղեկության ձեռքբերումը հնարավոր է միմիայն այդպիսի համակարգում: Քաղաքական, տնտեսական և հասարակական գործիչների՝ հաշվեկշիռ շահերին ուղղված համաձայնությունը և հայտարարությունը ազգային ու միջազգային շրջանակներում նախադրյալ են հանդիսանում „Բարեկեցություն բոլորի համար“:

8-ը հուլիսի 2009թ.



Պրոֆ.Դր. Հանս-Գերթ Փյոթերինգ
Եվրախորհրդարանի նախագահ



Պրոֆ. Դր. Բեռնհարդ Ֆոգել
Կոնրադ Ադենաուեր Հիմնադրամի /գ.մ./ նախագահ



Դր. Վիլֆրիդ Մարտենս
Եվրոպական ժողկուսակցության (ԵԺԿ) նախագահ



Յոզեֆ Դաուլ
ԵԺԿ-ֆրակցիայի նախագահ
Եվրախորհրդարանում



Պրոֆ. Դր. Յեես Պ. Վեերման
„Wetenschappelijk Instituut voor het CDA” - նախագահ